## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

*Եւրոպայի վաճառաշահ քաղքներուն ցուցակը։*

ԵՒՐՈՊԱՅԻ ճարտարութիւնն ու վաճառականութիւնը ասկէց առաջ երեք հատուածով համառօտելով[1], հիմա հոս տեղս ցուցակով մ'ալ դնենք անոնց թէ ցամաքի և թէ ծովու վաճառականութեան գլխաւոր կեդրոնները.

ԱՆԳՂԻԱ. Ծովային. Լոնտրա, Լիվրփուլ, Պրիսթըլ, Հըլ, Նիւքեսթըլ, Սընտըրլէնտ, Կլօսեսթըր և այլն. Կլէսկօ, Լոտիմըրը, Կրինոկ, Դապլին, Տընտի, և այլն. Ճիպրալթըր (Սպանիա), Մալթա (Միջերկրական —)։ Ցամաքային կամ ներքին Մանչեսթըր, Պիրմինկհէմ, Լիտս, Շէֆֆիլտ, Պոլթըն, Փրեսթըն, Ռոչտէլ, Նոթինկհէմ, Հէլիֆաքս, Պրէտֆըրտ, Ուօլվըրհէմթըն, Ինվէրնէս և այլն։

ԳԱՂՂԻԱ. Ծովային. Մարսէյլ, Հավր, Պորտօ, Նանթ, Տիւնքերք, Ռուան, Քալէ, Սէն-Մալօ, Սէթ և այլն։— Ցամաքային. Փարիզ, Լիոն, Միւլհաուզէն, Սթրասպուրկ, Լիլ, Սէն-Քէնթէն, Թիւրքուէն, Թարար, Ռէնս, Էլպէօֆ, Սէտան, Թիէր, Թուլուզ, Սէնթ-Էթիէն, Ամիէն, Շալօն սիւր Սօն, Լիմոժ։

ԱՒՍՏՐԻԱ. Ծովային. Թրիէստ, Վենետիկ, Ֆիումէ։— Ցամաքային. Վիէննա, Փրակա, Ռայխէնպէրկ, Պրիւն, Օլմիւց, Լինց, Փեշթ, Տեպրեցին, Պրոտի, Լէմպէրկ, Կրաց, Միլան, Քոմօ, Մանթուա, Վերոնա, և այլն։

ՊՐՈՒՍԻԱ. Ծովային. Շթէթին, Տանցիկ, Քէօնիկսպէրկ, Մէմէլ, ևն։— Ցամաքային. Պէրլին, Պրէսլաւ, Մակտէպուրկ, Էլպէրֆէլտ, Պարմէն, Քրէֆէլտ, Տիւսէլտորֆ, Էքսլաշափէլ, Քոլոնիա։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑ. Ծովային. Համպուրկ, Պրէմէն, Լիւպէք, Էմտէն, Ռոստոք և այլն։— Ցամաքային՝ Լիփսիա, Շէմնից, Փլաուէն, Ցիթթաւ, Պրունսվիք, Ֆրանքֆորթ Մայնի, Հէնաու, Աւկսպուրկ, Նիւրնպէրկ, Մայնց, Մոնաքօ, Ուլմ։

ԶՈՒԻՑԵՐԻ. Ցամաքային. Պազլէօ, Ցիւրիխ, Ժընէվրա, Սանկալլոյ, Կարիս, Հէրիսաու, Նէօշաթէլ, Լոքըլ, Շօ-տը-Ֆօն, և այլն։

ՀՈԼԱՆՏԱ. Ծովային. Ամսթէրտամ, Ռոթթէրտամ, և այլն.— Ցամաքային. Ութրէխթ, Հարլէմ, Առնհէյմ, ևն։

ՊԵԼՃԻԱ. Ծովային. Անվէրս, Օսթանտ, և այլն։— Ցամաքային. Պրիւսէլ, Կանտ, Լիէժ, Պրուժ, Սէն-Նիքոլայ, Թուրնէյ։

ԻՏԱԼԻԱ. Ծովային. Ճէնովա, Նիցցա, Լիվորնոյ, Անքոնա, Սինիկալիա, Նափոլի, Փալերմոյ, Մեսսինա, և այլն։— Ցամաքային. Հռոմ, Թուրին, Ֆիրէնցէ, Պոլոնիա, Լուքքա, Փէշիա, Արփինոյ, Ֆոճճիա։

ՓՈՐԹՈՒԿԱԼ. Ծովային. Լիզպոնա, Փորթոյ, Փոնդա-տէլ-Կատայ (Ազորեան կղզեաց մէջ), Ֆունքալ (Մատէրա կղզին), և այլն։— Ցամաքային. Վիզէու, Պրակա, Փէզոյ-տա-Ռէկուա, և այլն։

ՍՊԱՆԻԱ. Ծովային. Քատիչէ, Մալակա, Ալիքանթէ, Պարսելոնա, Ռէուս, Վալէնցա, Պիլպաօ, Փալմա, և այլն։— Ցամաքային. Մատրիտ, Սիվիլիա, Կրանատա, Քորտովա, Օլոթ, Թառասա, Կուատալախարա։

ՏԱՆԻՄԱՐՔԱ. Ծովային. Քոփէնհակէն, Ալթոնա, Քիէլ, Էլսինէօր, Ֆլէնսպուրկ։

ՇՈՒԷՏ—ՆՈՐՎԷԿԻԱ. Ծովային. Սթոքհոլմ, Կոթէնպուրկ, Նորքէօփին, և այլն. Քրիստիանիա, Պէրկէն և այլն։— Ցամաքային. Քարլշթատ, Սքէնինկէ, և այլն։

ՌՈՒՍԻԱ. Ծովային. Փէթէրսպուրկ, Ռիկա, Օտէսսա, Թականրոկ, Ար-

1 Տես Ժ. երես 347, 377. ԺԱ. 85

խանկել, Աժտերխան, Պաքու և այլն։ — Ցամաքայէն. Մոսքուա, Սմոլենսք, Նիժնի-Նովկորոտ, Քուժա, Իվանովօ, Քիէվ, Խազան, Օրէնպուրկ, Թիֆլիզ, Վիլնա, Պերտիչեվ, Վարշավ, Թամպով, Քալից, Քրաքովիա, և այլն։

ՏԱՃԿԱՍՏԱՆ. Ծովայէն. Սամսոն, Սելանիք, Վառնա, Կելիպօլու, Քանէա (Կրետէ կղզին) և այլն։ — Ցամաքայէն. Ետրինէ, Մանաստըր, Սոֆիա, Իշքոտրա, Եանինա, Ֆիլիպպէ, Սերէ, Ռուսչուք, Լարիսսա, Պոսնա Սերայ, և այլն։

ՅՈՒՆԱՍՏԱՆ. Ծովայէն. Սիրա, Փաթրաս, Փիրէօ, Նաւփլիա։

Երևելի են գործեալ ծովայէն. Պրայիլա Վալաքիայի կամ Ուլահի մէջ. Կալաց Մոլտավիայի մէջ. Զանթա, Քորֆու Յոնիական կղզեաց մէջ։ — Ցամաքայէն. Պելկրատ Սերվիայի կամ Սըրֆի մէջ. Պուքրէշ Վալաքիայի մէջ. Եաշ Մոլտաւիայի մէջ։

---

# ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

## ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

*Բոզ կամ Գենտիա* [1]:

Լեռներու անմիջակ հողերուն վրայ բուսած գեղեցիկ թփերէն մէկն ալ բոզն է, որուն գեղեցկութեանը հետ օգտակարութիւններն ալ շատ են։ Աս բոյսը նախնիք ալ ճանչցած էին. և Պլինիոս կ'ըսէ թէ Իլլիրիկեցւոց Գենտիոս թագաւորն եղաւ ատոր գտնողը՝ և ինքը առաջին ատոր բժշկական յատկութիւններն իմացաւ. ան թագաւորն՝ որ անհանճար ու անպիտան մարդ ըլլալուն՝ ամենևին աս տեսակ անմեղ ու օգտակար զբօսանաց ետևէ չէր իյնար. և իր անպիտանութեանը վկայներ են իր եղբայրասպանութիւնն ու բոլոր ժողովրդեան ատելի ըլլալը. անշուշտ դիպուածով մը ու առանց գիտնալու աս մեծ օգուտն ըրեր է մարդկանց ու բժշկութեան. որով և անունն ալ բոյսին վրայ դրուեր է։

Բոզը բազմատեսակ է, անանկ որ հիմա ինչուան հարիւրյիսուն տեսակ կը համրուի. բայց ասոնց ամէնն ալ սովորաբար ցուրտ կլիմայ կ'ուզեն. իսկ ոմանք ամենէն բարձր լեռներու վրայ անլուծանելի ձիւներուն մօտ տեղուանքը միայն կ'աճին։ Աս թփին գլխաւոր աղուորութիւնը ծաղկըներուն վրայ է, որ գեղեցիկ ու փայլուն ըլլալէն զատ՝ գոյներու զանազանութեամբ ալ շատ անգամ իրարմէ կը տարբերին՝ մի և նոյն գեղեցկութիւնը պահելով. ոմանք երկնագոյն կամ մութ կապուտի կը զարնեն, ոմանք վարդի ու ծիրանիի կը զարնեն, շատն ալ ոսկիի պէս կը փայլին կամ բաց դեղին են, իսկ այլք ալ քիչ կամ շատ ճերմակագոյն։ Ափսոս որ աս գեղեցիկ թուփը մեր պարտէզներուն մէջ չաճիր, ու լեռներէն ալ որ հոն փոխադրուի՝ սովորաբար կը թոռմի. և այնչափ բազմաթիւ տեսակներէն հազիւ թէ քանի մը տեսակը միայն շատ աշխատանօք ու մեծ խնամքով կրնայ դիմանալ ու մշակուիլ. և ան ատեն իրենց ձևոյն գեղեցկութեամբն ու ծաղկըներուն գունոցն աղուոր տեսքովը շատ մեծ զարդ կ'ընեն։ Իսկ թէ որ աս գեղեցկութեանց վրայ անուշահոտութիւն ալ աւելնար՝ բոզը աննման բոյս կ'ըլլար պարտէզներու մէջ։ Բայց պարտէզի մէջ տնկելու համար՝ հիւսիսային կողմ պէտք է ընտրես, ու բոյսը շուքի մէջ պիտի ըլլայ. և որովհետև սովորական գետնի հողով չըլլար՝ առ ցախ թփին հողը, որ աղէկ պարարտ է, ու արմատը անոր մէջ թաղէ. բայց ձմեռուան սաստիկ խոնաւ ըրած ատենները աղէկ զգուշութեամբ պէտք է պահես. որովհետև ցրտէն աւելի՝ խոնաւութիւնը կը վնասէ բոյսին։

Բոզին սովորական ու ծանօթ տեսակները Եւրոպայի մէջ շատ կը գըտ-

1 Գղ. Gentiane. Տճ. ճէնթեյանէ, ճէնթեյան օթու։ Բոզ բառը Գաղիանոսի բժշկարանին մէջ գործածուած է աս բոյսիս. Բժշկարանն ալ ՃՅԻ տեղ կ'ըսէ։